ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/617/2024-2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **22 օգոստոսի 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի օգոստոսի 22-ին քննելով ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Նորիկի Մարտիրոսյանի կողմից 2021 թվականի հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/617/2024-2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովն, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված

գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Նորիկի Մարտիրոսյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ին Արթուր Մարտիրոսյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը:

Նշված ծանուցումը Արթուր Մարտիրոսյանը չի ստացել և փոստային առաքանին 2024 թվականի մայիսի 3-ին հետ է վերադարձվել Հանձնաժողով՝ «չպահանջված» նշումով:

1.3 Արթուր Մարտիրոսյանի Հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ծանուցումը 2024 թվականի սեպտեմբերի 20-ին թիվ 01/2974-2024 գրությամբ Հանձնաժողովը փոխօգնության կարգով ուղարկել է ՀՀ ներքին գործերի նախարարին և խնդրել՝ հանձնարարել ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը ծանուցումը փոխանցել հայտարարատուին:

Նշված ծանուցումը Արթուր Մարտիրոսյանին է հանձնվել 2024 թվականի հոկտեմբերի 27-ին:

1.4 2024 թվականի հոկտեմբերի 29-ին պատշաճ ծանուցված Արթուր Մարտիրոսյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 712/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 2025 թվականի օգոստոսի 22-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/617/2024-2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք)

նախատեսված 2021 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

2.2 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմից 2023 թվականի հուլիսի 28-ին թիվ Մ-3197-2023 գրությամբ ստացված ռեեստրի Excel ֆայլում առկա տվյալների համաձայն՝ Արթուր Նորիկի Մարտիրոսյանը 2021 թվականի օգոստոսի 1-ից դադարեցրել է պաշտոնավարումը՝ որպես ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ:

Վարույթի ընթացքում վերը նշված տվյալի հավելյալ ճշգրտման արդյունքում պարզվել է, որ համայնքապետարանի կողմից ուղարկված ռեեստրի տվյալներում առկա է սխալ և Արթուր Մարտիրոսյանը չունի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

3.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների, **նրանց տեղակալների** (...) պաշտոններ զբաղեցնող անձինք:

3.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, **դադարեցնելու հայտարարագրերը** պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

3.3 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լսումներ կարող են չանցկացվել, եթե արչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լսումներ անցկացվեն:

3.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.10 Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** *կամ կազմի* ***բացակայությունը***:

3.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 247-րդ հոդվածը սահմանել է, որ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման (...) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարչական վարույթի ընթացքում հաստատված փաստական տվյալների համաձայն Արթուր Մարտիրոսյանը չի կրում 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, որի արդյունքում վարչական իրավախախտման դեպքը բացակայում է, ուստի թիվ ՎԻՎ/617/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արթուր Նորիկի Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված թիվ ՎԻՎ/617/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Նորիկի Մարտիրոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ